Կադաստրի կոմիտեի
գնումների կազմակերպման բաժնի պետ
պարոն Հրաչյա Մանուկյանին

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

Ի պատասխան «ՍՊ Գեոնավիթել» ՍՊԸ-ի կողմից իրականացված պետական կարիքների համար Երևան քաղաքի Կոնդ թաղամասի ներքին չափագրման հատակագծերի ստեղծման աշխատանքների կատարման պետական գնման N ԿԿ–ԲՄԱԾՁԲ-20/07 պայմանագիրի աշխատանքների ընդունման վերաբերյալ Գեոդեզիայի և հողաշինարարության վարչությունը հայտնում է հետևյալը.

Ընդունող հանձնաժողովը ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ տեխնիկական պահանջների գնման ժամանակացույցի համաձայն նախատեսված 1096 միավոր ներքին չափագրման հատակագծերի փոխարեն իրականացվել են 845 միավոր հատակագծերի ստեղծման աշխատանքներ, պայմանավորված սեփականատերերի մի քանի գույքերի վերամիավորմամբ, որոշ սեփականատերերի բացակայությամբ և ներքին չափագրումից հրաժարվելու գործընթացով:

Միաժամանակ հայտնում ենք, որ չափագրման աշխատանքների անհնարինությունը կապված է եղել նաև երկրում տիրող արտակարգ դրության հետ, ուստի առաջարկվում է վերոնշյալ գործող պայմանագիրը միակողմանի կամ երկկողմանի լուծել:

Գեոդեզիայի և հողաշինարարության
վարչության պետի ժ/պ՝ Բագրատ նազարյան

Կատարող՝ Ա. Տոնոյան
Գեոդեզիայի և քարտեզագրության
բաժնի պետ՝ Ա. Մողոմոնյան
Հեռ՝. 060-474238